ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Վահան Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219.1.-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 219.1. Տարածքային կառավարման մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները

1. Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1.-րդ հոդվածի առաջին, երկրորդ մասերով և 152.1.-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի՝ 43.1.-րդ հոդվածի երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, 152.1.-րդ հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ մասերով, 158-րդ (բացառությամբ երկրորդ, երրորդ, տասներկուերորդ, տասնյոթերորդ, տասնիններորդ և քսանմեկերորդ մասերի), 162-րդ և 169.16.-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

3. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաեւ սույն օրենսգրքի 114-րդ, 154-րդ, 154.1.-րդ, 180-րդ, 169.1.-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

4. Տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները (Երևանի քաղաքապետը), իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: